



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 29 » 01 2019թ. N: 8 ք. Գյումրի

«ԱՐԹԻԿԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԳԵՏԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»,
«ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՏՈՒՖԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՆՈՐ
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԳԵՏՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ԿՐԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ», «ՀՈՎԻՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ՂԱՐԻՔՋԱՆՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ԲԱՍԵՆԻ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԻԴԻՏ
ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի
փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների
և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցերը հաստատելու և Հայաստանի
Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ
934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 177-րդ կետի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր
մասնագետներ Բարսեղ Քոչարյանին, Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին, ՀՀ
Շիրակի մարզի «Արթիկի թիվ 1 հիմնական դպրոց», «Գետափի միջնակարգ դպրոց»,
«Նահապետավանի միջնակարգ դպրոց», «Նոր Ախուրյանի հիմնական դպրոց», «Հովիտի հիմնական
դպրոց», «Բասենի միջնակարգ դպրոց», պետական ոչ առևտրային կազմակերպություններում
իրականացնել համակարգի գնահատման՝ «Գետքի միջնակարգ դպրոց», «Տուֆաշենի միջնակարգ
դպրոց», «Կրաշենի հիմնական դպրոց», «Ղարիքջանյանի միջնակարգ դպրոց», «Բասենի միջնակարգ
դպրոց», պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացնել ֆինանսական աուդիտ:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Մուրադյանին:
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մ.
Մուրադյանին՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել 2019թ.
հունվարի 25-ից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է

